

Արձանագրություն N 4-05/17

Շուշիի տեխնոլոգիական համալսարանի գիտական խորհրդի 2017 թ.-ի
մայիսի 31-ի նիստի

Ներկա էին՝ Թորմաջյան Հ.Վ. (տ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Հակոբյան Գ.Ա. (գ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Իսրայելյան Ռ.Գ. (տ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Գասպարյան Պ.Յու. (տ.գ.թ., դոցենտ), Խաչատրյան Գ.Մ. (ֆ.մ.գ.թ.), Հարությունյան Մ.Ա. (պ.գ.թ.), Գրիգորյան Թ.Գ. (գ.գ.թ.), Առաքելյան Ա.Ա., Հակոբյան Ռ.Ս., Հակոբյան Շ.Հ., Շահբազյան Ա.Վ., Դավթյան Շ.Ա., Ավետիսյան Ա.Ա., Սայիյան Ռ.Գ., Ծատրյան Ս.Բ. (ուսանող), Առուշանյան Գ.Ա. (ուսանող), Աբաղյան Մ.Գ. (ուսանող) :

Հրավիրված էին հոգաբարձուների խորհրդի անդամներ՝ Գալստյան Ս.Բ. (գ.գ.թ., դոցենտ) և Հարությունյան Ռ.Մ.:

ՕՐԱԿԱՐԳ

1. Շուշիի տեխնոլոգիական համալսարանի բակալավրի հեռակա ուսուցման համակարգի ակադեմիական պարտքեր ունեցող ուսանողների հետագա ուսումնառության մասին:

2. Շուշիի տեխնոլոգիական համալսարանի տնտեսական և կազմակերպչական հարցերի գծով վարչության աշխատակիցներին մայիս ամսին հավելավճար տալու մասին:

3. «Եզնիկ Մոզյան» արհեստագործական ուսումնարանի աշակերտներին պարգևատրելու մասին:

Լսեցին 1-Գիտխորհուրդը քննարկեց տեխնոլոգիական և ճարտարապետաշինարարական ֆակուլտետների դեկանների ներկայացումները: Առաջարկվում է բակալավրի հեռակա ուսուցման համակարգի այն ուսանողներին, ովքեր ունեն ուսման անբավարար առաջադիմություն, ուսումնական պարապմունքներից անհարգելի բացակայություններ և չեն վճարել ուսման վարձը, հեռացնել ուսանողության շարքերից:

Որոշեցին 1- Ուսման անբավարար առաջադիմության, ուսումնական պարապմունքներից անհարգելի բացակայությունների, ուսման վարձը չվճարելու պատճառով Շուշիի տեխնոլոգիական համալսարանի բակալավրի հեռակա ուսուցման համակարգի ներքոհիշյալ ուսանողներին հեռացնել ուսանողության շարքերից:

Գյուղատնտեսության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ (I կուրս)

1. Մարտիրոսյան Կարեն Էրիկի
2. Բասենցյան Արտյոմ Աշոտի

3. Պետրոսյան Աշոտ Գագիկի
4. Աբրահամյան Հարություն Արարատի
5. Հակոբյան Հարութ Գագիկի
6. Հակոբյան Էդուարդ Կիմայի
7. Միրզոյան Վարդգես Աշոտի
8. Առաքելյան Վանիկ Արմիկի
9. Ղազարյան Վրեժ Շահենի

Համակարգչային ճարտարագիտություն (I կուրս)

1. Բաղդյան Գեորգի Գառնիկի
2. Գաբրիելյան Կարեն Հրանտի

Տրանսպորտային ուղիների միջոցների շինարարություն, կառավարում և դրանց շահագործում (II կուրս)

1. Աթայան Սասուն Յուրիկի

Լսեցին 2-Քննարկվեց պրոռեկտոր Ս.Գալստյանի ներկայացումը, համաձայն որի առաջարկվում է հաշվի առնելով համալսարանի տնտեսական և կազմակերպչական հարցերի գծով վարչության աշխատակիցների լրացուցիչ ծանրաբեռնվածությունը և նրանց օժանդակությունը դաշտային աշխատանքներին, աշխատողներին մայիս ամսին տալ հավելավճար:

Որոշեցին 2-Հաշվի առնելով Շուշիի տեխնոլոգիական համալսարանի տնտեսական և կազմակերպչական հարցերի գծով վարչության աշխատակիցների լրացուցիչ ծանրաբեռնվածությունը և նրանց օժանդակությունը դաշտային աշխատանքներին, աշխատողներին մայիս ամսին տալ հավելավճար հետևյալ չափերով՝

1. Ղազարյան Անուշ-10000 (տաս հազար) ՀՀ դրամ
2. Հարությունյան Գենզուրա-10000 (տաս հազար) ՀՀ դրամ
3. Դանիելյան Ռիտա-30000 (երեսուն հազար) ՀՀ դրամ
4. Կիրոյան Իզաբելա-30000 (երեսուն հազար) ՀՀ դրամ
5. Թաիրյան Լեյլա-15000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ
6. Արզումանյան Վերա-10000 (տաս հազար) ՀՀ դրամ
7. Օհանյան Արամ-10000 (տաս հազար) ՀՀ դրամ

Լսեցին 3-Ներկայացվեց առաջարկություն Շուշիի տեխնոլոգիական համալսարանի բնական տեխնոլոգիաների լաբորատորիայի սարքավորումների տեղադրման ժամանակ եռակցման աշխատանքներին օժանդակություն ցուցաբերած «Եզնիկ Մոզլան» արհեստագործական ուսումնարանի աշակերտներին պարգևատրելու մասին (զեկուցող՝ Պ.Գասպարյան):

Որոշեցին 3- «Եզնիկ Մոզյան» արհեստագործական ուսումնարանի աշկերտներին, ովքեր Շուշիի տեխնոլոգիական համալսարանի բնական տեխնոլոգիաների լաբորատորիայի սարքավորումների տեղադրման ժամանակ եռակցման աշխատանքներին օժանդակություն են ցուցաբերել, պարգևատրել արժեքավոր նվերներով:

| | | |
|------------|----------------|---------------|
| Նախագահ՝ | ստորագրություն | Հ.Վ.Թորմաջյան |
| Քարտուղար՝ | ստորագրություն | Ա.Ա.Առաքելյան |